Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակի (Սև ցուցակի) ուսումնասիրություն

Ծրագրի ղեկավար և ուսումնասիրության իրականացնող՝ Արմենուհի Բուռնազյան

Ծրագրի օգնական՝ Աստղիկ Ավչյան

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (Սև ցուցակում) հետհեղափոխական շրջանում ներառված ընկերությունները: Մասնավորապես, մանրամասն վերլուծության են ենթարկվել այն ընկերությունները, որոնք հայտնվել են ցուցակում այն պետական կառույցների բողոքների հիման վրա, որոնք նախահեղափոխական շրջանում եղել են իրենց խոշոր պատվիրատուների ցանկում: Այսպիսով, փորձ է կատարվել համադրել պետական կառույցների վարքագիծը որոշակի մատակարարների նկատմամբ նախա- և հետհեղափոխական ժամանակաշրջաններում:

Որպես նախահեղափոխական և հետհեղափոխական ժամանակաշրջաններ դիտարկվել են համապատասխանաբար՝ 2017թ. մայիսի 1-ից մինչև 2018թ. մայիսի 1-ն և 2018թ. մայիսի 1-ից մինչև 2019թ. մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածները:

Ընդհանուր առմամբ, դիտարկվող նախահեղափոխական ժամանակահատվածում գնումների Սև ցուցակում հայտնվել է 71 սուբյեկտ/մասնակից, մինչդեռ հետհեղափոխական նույն ժամանակահատվածում ավելի քան 2 անգամ ավելի՝ 159 մասնակից: Մասնակիցների մեծ մասը հայտնվել է գնումների Սև ցուցակում մրցույթների հայտերի գնահատման փուլում՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի չներկայացման և գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու պատճառով:

Հետհեղափոխական դիտարկվող ժամանակահատվածի Սև ցուցակի 159 մասնակիցներից 7-ը հանվել են ցանկից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների հիման վրա, իսկ 87-ը երբևիցե չեն կնքել որևէ պայմանագիր պետգնումների շրջանակներում, ինչը ենթադրում է, որ այս մասնակիցները հայտնվել են ցուցակում մրցույթների հայտերի գնահատման փուլում թույլ տված խախտումների հետևանքով (օրինակ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո չեն ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը կամ հրաժարվել են պայմանագիր կնքելուց կամ ունեցել են ժամկետանց հարկային պարտավորություններ): Մնացած 65 մասնակիցներից 17-ը հայտնվել են Սև ցուցակում այն պետական կառույցների բողոքների հիման վրա, որոնք նախահեղափոխական շրջանում եղել են իրենց խոշոր պատվիրատուների ցանկում (Հավելված 1): Վերոնշյալ 17 մասնակիցներից առավել խոշոր պայմանագրային պորտֆել ունեցողների վերաբերյալ իրականացվել է մանրամասն վերլուծություն:

Ուսումնասիրելով Պաշտպանության նախարարության (ՊՆ) 2019թ. ապրիլի 9-ի գրության հիման վրա Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ-ին գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը, պարզ է դառնում, որ այս ընկերությունը, մասնակցելով ՊՆ կարիքների համար ամբարձիչ մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգին, գնային առաջարկում թույլ է տվել մեխանիկական վրիպակ՝ ներկայացնելով միավորի գինը ընդհանուր գնի փոխարեն: Ընկերությունը դիմել է Ֆինանսների նախարարի առաջին տեղակալին և ՊՆ գնումների համակարգողին՝ խնդրելով ներկայացված գները ընդունել որպես միավորի գին և բազմապատկել համապատասխան խմբաքանակներով, սակայն պաշտոնյաների պատասխանները եղել են բացասական, ինչի պատճառով ընկերությունը, 1-ին տեղ զբաղեցրած մասնակից դառնալով, չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող համապատասխան փաստաթղթերը: Բացի այդ, ՊԵԿ-ից ստացված եզրակացության համաձայն այս ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Պետբյուջեի նկատմամբ 39,000 դրամի

ժամկետանց պարտավորություններ (զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով դրոշմանիշային վճարի գծով):

Հիմք ընդունելով այս հանգամանքները, գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ընգրկել է Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ-ին գնումների Սև ցուցակում 2 տարի ժամկետով:

Ուշագրավ է այն փաստը, որ պետգնումների բոլոր ժամանակաշրջաններում այս ընկերության համար ՊՆ հանդիսացել է միակ պատվիրատուն, և նրա հետ կնքվել են բավական խոշոր պայմանագրեր: Մասնավորապես, նախահեղափոխական ժամանահատվածում ՊՆ-ն այս ընկերության հետ կնքել է 686,240,390 դրամ ընդհանուր արժեքով 3 պայմանագիր՝ վարժասարքերի և վարժասարքերի նորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով (ինչպես նաև մինչ այդ 2017 թ. 5 ապրիլին 650 մլն դրամի վարժասարքերի ձեռքբերման), իսկ հետհեղափոխական ժամանակահատվածում՝ 30 մլն դրամի 1 պայմանագիր՝ վարժասարքերի նորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով (Աղյուսակ 1): Ի դեպ, այս պայմանագրերը կնքվել են մեկ անձից գնման ընթացակարգով այն հիմնավորմամբ, որ Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ-ն հանդիսանում է շուկայում տվյալ ապրանքի և ծառայության միակ մատակարարը:

Հարկ է նշել, որ Գնումների մասին օրենքի (ԳՄՕ) 6-րդ հոդվածում սահմանվում է, որ *բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի*[1], գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսպիսով, հաշվի առնելով Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ-ի գերիշխող/մենաշնորհային դիրքը շուկայում, ակնկալվում է, որ, չնայած Սև ցուցակում 2 տարի ժամկետով ընդգրկված լինելու հանգամանքի, ապագայում ևս այս ապրանքները և ծառայությունները ձեռք կբերվեն այս ընկերությունից մեկ անձից գնման եղանակով:

[1] ԳՄՕ Հոդված 23. Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝ 1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ. 3) պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝ ա. լրացուցիչ ապրանքների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և բ. դրա գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով. 4) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը. 5) գնումն իրականացվում է ՀՀ տարածքից դուրս:

Աղյուսակ 1. Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ-ի պետգնումներում կնքված պայմանագրային պորտֆելի բնութագիրը

	Պատվիրատու	Կնքված պայմանագրերի քանակը	Կնքված պայմանագրերի ընդհ. արժեքը, դրամ	Գնման առարկան	Գնման ընթացակարգը
Նախահեղափոխական ժամանակահատված					
	ՊՆ	3	686,240,390	Վարժասարքեր, վարժասարքերի նորոգման ծառայություններ	ՄԱ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3**	**686,240,390**		
Հետհեղափոխական ժամանակահատված					
	ՊՆ	1	30,000,000	Վարժասարքերի նորոգման ծառայություններ	ՄԱ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1**	**30,000,000**		

ԱՆ քրեակատարողական ծառայության 2018թ. դեկտեմբերի 28-ի գրության հիման վրա Մակրո Ֆուդ ՍՊԸ-ին գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի ուսումնասիրությունը փաստում է, որ այս ընկերության և ԱՆ քրեակատարողական ծառայության միջև կնքված 2 պայմանագրերի (բաց մրցույթով և գնանշման հարցմամբ) շրջանակներում Մակրո Ֆուդ ՍՊԸ-ն խախտել է պայմանագրերով ստանձնած պարտավորությունները՝ չի ավարտել նախատեսված ապրանքների մատակարարումները (չի մատակարարվել 24.315 հատ ձու, 5.810 կգ տավարի միս և 37.840 կգ կարտոֆիլ), ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից այդ պայմանագրերի միակողմանի մասնակի լուծմանը: Ընկերությունը պատճառաբանել է, որ պայմանագրային պարտավորությունների մասնակի չկատարումը պայմանավորված է եղել պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքները չընդունելու հետ, ինչը հերքվել է ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից:

Հաշվի առնելով փաստարկները, գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ընգրկել է Մակրո Ֆուդ ՍՊԸ-ին գնումների Սև ցուցակում 2 տարի ժամկետով:

Մակրո Ֆուդ ՍՊԸ-ի պետգնումներում կնքված պայմանագրային պորտֆելի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԱՆ քրեակատարողական ծառայությունը հանդիսացել է այս ընկերության համար խոշոր պատվիրատուներից մեկը: Մասնավորապես, նախահեղափոխական ժամանակահատվածում այս ընկերության հետ կնքված ընդհանուր 263,070,560 դրամ արժողությամբ 35 պայմանագրերից 5 ը՝ 182,483,400 դրամ ընդհանուր արժեքով կնքվել է ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից (ընդհանուրի 69%-ը), իսկ հետհեղափոխական ժամանակահատվածում՝ ընդհանուր 128,666,266 դրամի 19 պայմանագրերից 4-ը՝ 43,217,370 դրամ ընդհանուր արժեքով (ընդհանուրի 34%-ը) կնքվել է այս պետական կառույցի կողմից (Աղյուսակ 2):

Ուշագրավ է այն փաստը, որ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված բողոքը հիմնավորվում է ընկերության կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների խախտմամբ (ապրանքների թերմատակարարմամբ) և ինչպես երևում է գնումների հաշվետվողականության ARMEPS կայքում ներկայացված փաստաթղթերից այս ընկերությունը նախկինում բազմաթիվ անգամներ խախտել է պայմանագրային պարտավորությունները և նրանից գանձվել են տույժեր (պայմանգրային գնի 0,5%-ը) և տուժանքներ (պայմանագրի կատարման ապահովման գումարը), սակայն այս պետական կառույցի կողմից ներկայացված բողոքը ընկերությանը Սև ցուցակում ներառելու նպատակով նախկինում մերժվել է: Միևնույն ժամանակ, ARMEPS կայքում այլ պատվիրատուների, օրինակ, ԱՆ Սևանի հոգեբուժական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից ներկայացված մի շարք հանձման-ընդունման արձանագրությունները վկայում են, որ այս ընկերությունը տարբեր պայմանագրերով հաստատված քանակություններով և ժամկետներում պատշաճ կերպով իրականացրել է իր պայմանագրային պարտավորությունները:

Աղյուսակ 2. Մակրո Ֆուդ ՍՊԸ-ի պետգնումներում կնքված պայմանագրային պորտֆելի բնութագիրը

	Պատվիրատու	Կնքված պայմանագրերի քանակը	Կնքված պայմանագրերի ընդհ. արժեքը, դրամ	Գնման առարկան	Գնման ընթացակարգը
Նախահեղափոխական ժամանակահատված					
	ԱՆ քրեակատարողական ծառայություն	5	182,483,400	Տավարի մսի պահածո և կարտոֆիլ, սննդամթերք	1 ՀԲՄ, 4 ԳՀ
	ՊՆ	2	**53,370,897**	Գարի, սննդամթերք	ԳՀ
	ԱՆ Սևանի հոգեբուժական հիվանդանոց ՓԲԸ	3	**9,044,310**	Սննդամթերք	ԳՀ
	ԱԱԾ	1	5,573,420	Սննդամթերք	ԳՀ
	Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն ՓԲԸ	1	4,353,480	Սննդամթերք	ԳՀ
	Ոստիկանություն	6	**3,599,860**	Տնտեսական, կենցաղային ապրանքներ, սնունդ	ԳՀ
	Կապանի բժշկական կենտրոն ՓԲԸ	1	1,346,130	Սննդամթերք	ԳՀ
	Այլ				
	ԸՆԴԱՄԵՆԸ	**35**	**263,070,560**		
Հետհեղափոխական ժամանակահատված					
	ՊՆ	2	**73,177,722**	Տնտեսական ապրանքներ, հաճարաձավար	ԳՀ

	ԱՆ քրեակատարողական ծառայություն	4	**43,217,370**	Կարտոֆիլ, սննդամթերք, տնտեսական ապրանքներ	ԳՀ
	ԱՆ Սևանի հոգեբուժական հիվանդանոց ՓԲԸ	2	**6,066,900**	Սննդամթերք	ԳՀ
	Ոստիկանություն	3	**2,754,911**	Տնտեսական, կենցաղային ապրանքներ	ԳՀ
	ԱԱԾ	2	**2,450,010**	Տնտեսական ապրանքներ և անկողնային պարագաներ	ԳՀ
	Այլ				
	ԸՆԴԱՄԵՆԸ	**19**	**128,666,266**		

ՊՆ կողմից 2018թ. դեկտեմբերի 14-ի գրության հիման վրա Հրայր Մանուկյան Ա/Ձ-ին գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի ուսումնասիրությունը վկայում է, որ նա խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ 30.034 կգ լոլիկի փոխարեն մատակարարելով ընդամենը 4.120 կգ լոլիկ: Արդյունքում, այս մասնակիցը հայտնվել է պետգնումների Սև ցուցակում 2 տարի ժամկետով:

Հարկ է նշել, որ դիտարկվող երկու ժամանակաշրջանում Հրայր Մանուկյան Ա/Ձ-ի միակ պատվիրատուն եղել է ՊՆ-ն (Աղյուսակ 3) և համաձայն ARMEPS կայքում ներկայացված տվյալների, մինչև Սև ցուցակում ներառվելը այս մատակարարը հիմնականում վճարվել է պայմանագրերում նշված ամբողջ գումարը, ինչը ենթադրում է, որ հիմնականում չի խախտել ստանձնած պայմանագրային պարտավորությունները:

Աղյուսակ 3. Հրայր Մանուկյան Ա/Ձ-ի պետգնումներում կնքված պայմանագրային պորտֆելի բնութագիրը

	Պատվիրատու	Կնքված պայմանագրերի քանակը	Կնքված պայմանագրերի ընդհ. արժեքը, դրամ	Գնման առարկան	Գնման ընթացակարգը
Նախահեղափոխական ժամանակահատված					
	ՊՆ	5	194,729,163	Զավարեղեն, բանջարեղեն, մածուն, թանապուր, սննդամթերք	3 ԳՀ, 1 ՇՀ, 1 ՀԲՄ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5**	**194,729,163**		
Հետհեղափոխական ժամանակահատված					
	ՊՆ	4	102,217,986	Պարենային ապրանքներ, բանջարեղեն	3 ԳՀ, 1 ՀԲՄ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**4**	**102,217,986**		

ԱՆ քրեակատարողական ծառայության 2018թ. նոյեմբերի 8-ի գրության հիման վրա Բիզնես Թրենդ ՍՊԸ-ին գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կնքված պայմանագրի շրջանակներում ընկերության կողմից մատակարարված խտացրած կաթ, շաքարով ապրանքատեսակը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին (համաձայն Ստանդարտ Դիալոգ ՍՊԸ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննության): Ընկերությունը պարտավորվել է փոխարինել այդ ապրանքները տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքներով, սակայն չի կատարել պարտավորությունը, ինչի արդյունքում ԱՆ քրեակատարողական ծառայությունը միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը տվյալ ապրանքների մասով: Այսպիսով, հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքները, Բիզնես Թրենդ ՍՊԸ-ը հայտնվել է Սև ցուցակում 2 տարի ժամկետով:

Հարկ է նշել, որ այս ընկերության նկատմամբ բողոքներ են ներկայացվել և Սև ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգեր են նախաձեռնվել երկու այլ պետական կառույցների՝ Երևանի քաղաքապետարանի (159.931 դրամի ժամկետանց հարկային պարտավորություն) և ՊՆ-ի (496.011կգ կարտոֆիլի փոխարեն մատակարարվել է 238.153կգ) կողմից, որոնք ևս բավարարվել են:

Ընդհանուր առմամբ Բիզնես Թրենդ ՍՊԸ-ի հետ նախահեղափոխական ժամանակահատվածում 95,100,000 դրամի միայն 1 պայմանագիր է կնքվել, մինչդեռ հետհեղափոխական ժամանակահատվածում՝ 5 պայմանագիր 127,611,684 դրամ ընդհանուր արժեքով (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Բիզնես Թրենդ ՍՊԸ-ի պետգնումներում կնքված պայմանագրային պորտֆելի բնութագիրը

	Պատվիրատու	Կնքված պայմանագրերի քանակը	Կնքված պայմանագրերի ընդհ. արժեքը, դրամ	Գնման առարկան	Գնման ընթացակարգը
Նախահեղափոխական ժամանակահատված					
	ԱՆ քրեակատարողական ծառայություն	1	95,100,000	Սննդամթերք	ԳՀ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1**	**95,100,000**		
Հետհեղափոխական ժամանակահատված					
	ՊՆ	3	126,071,184	Պարենային միջոցներ, շաքարավազ, կարտոֆիլ	2 ՀԲՄ, 1 ԳՀ
	ԱՆ Սևանի հոգեբուժական հիվանդանոց ՓԲԸ	2	1,540,500	Սննդամթերք	ԳՀ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**5**	**127,611,684**		

Ուսումնասիրելով ԵՔ-ի 2019թ. ապրիլի 3-ի գրության հիման վրա Թի ԷՆ Սաունդ ՍՊԸ-ին գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը, պարզ է դառնում, որ այս ընկերության կողմից ԵՔ-ի կարիքների

համար՝ մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայության (Կանանց միջազգային օրվան և Թատրոնի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ) ձեռքբերման հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի համար ներկայացված հայտի մեջ հավելվածներից մեկը հաստատված չի եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընկերությունը ծանուցվել է մեկ օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունը, սակայն ընկերության հիմնավորմամբ տեխնիկական պատճառներով չի ստացել ծանուցումը և շտկում չի կատարել: Համաձայն Կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 20-րդ ենթակետի՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչն էլ իր հերթին համաձայն ԳՄՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի հիմք է հանդիսանում ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Հատկանշական է, որ նախահեղափոխական ժամանակահատվածում Թի ԷՆ Սաունդ ՍՊԸ-ի միակ պատվիրատուն եղել է ԵՔ-ը, որի հետ կնքվել է 2 խոշոր պայմանագիր Երևան քաղաքում տարբեր միջոցառումների կազմակերպման նպատակով: Մասնավորապես, մի պայմանագիրը՝ 8,957,000 դրամ արժեքով կնքվել է Կանանց միջազգային օրվան (մարտի 8) նվիրված միջոցառումների և Թատրոնի միջազգային օրվան նվիրված հյուրասիրության կազմակերպման համար: Մյուս պայմանագիրը՝ 39,680,000 դրամ արժեքով կնքվել է 6 տարբեր միջոցառումների կազմակերպման համար, այդ թվում Կանանց միջազգային օրվան (ապրիլի 7) նվիրված, Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա առթիվ, Վերջին զանգի, Երեխաների իրավունքի պաշտպանության միջազգային օրվան նվիրված և այլն: Ուշագրավ է, որ Կանանց միջազգային օրվան նվիրված 2 միջոցառումների համար ներկայացվել է միևնույն տեխնիկական բնութագիրը սակայն մարտի 8-ի միջոցառման կազմակերպման համար գինը սահմանվել է 4,983,000 դրամ, մինչդեռ ապրիլի 7-ի համար՝ 6,969,000 դրամ:

Ինչ վերաբերվում է հետհեղափոխական շրջանին, ապա մինչև գնումների Սև ցուցակում հայտնվելը ընկերությունը հասցրել է հրատապ մեկ անձից գնման եղանակով 7,999,110 դրամի խոշոր պայմանագիր կնքել Վարչապետի աշխատակազմի հետ՝ Շիրակի մարզում (ք. Գյումրի) Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների կազմակերպման և սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով (Աղյուսակ 5): Ի դեպ, չնայած Քաղաքացու օրը նշվել է և ծառայությունները մատուցվել են 2019թ. ապրիլի 27-ին, ընկերության հետ պայմանագիրը կնքվել է ավելի ուշ՝ 2019թ. մայիսի 5-ին:

Աղյուսակ 5. Թի ԷՆ Սաունդ ՍՊԸ-ի պետգնումներում կնքված պայմանագրային պորտֆելի բնութագիրը

	Պատվիրատու	Կնքված պայմանագրերի քանակը	Կնքված պայմանագրերի ընդհ. արժեքը, դրամ	Գնման առարկան	Գնման ընթացակարգը
Նախահեղափոխական ժամանակահատված					
	ԵՔ	2	48,637,000	Միջոցառումների կազմակերպման ծառայություններ	1 ԲՄ, 1 ԳՀ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**2**	**48,637,000**		
Հետհեղափոխական ժամանակահատված					
	Ոստիկանություն	1	245,000	Ձայնային ծառայություններ	ՄԱ
	Վարչապետի աշխատակազմ	1	7,999,110	Մշակութային միջոցառումների կազմակերպման և սպասարկման ծառայություններ	ՀՄԱ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**2**	***8,244,110***		

Մշակույթի նախարարության 2018թ. նոյեմբերի 3-ի գրության հիման վրա Արգոհշին ՍՊԸ-ին գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընկերությունը չի իրականացրել պայմանագրով նախատեսված աշխատանքները (պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման), ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և ընկերությանը Սև ցուցակում ներառմանը: Հարկ է նշել, որ այս ընկերության նկատմամբ նախկինում բողոք է ներկայացվել նաև ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից, սակայն այն մերժվել է և ընկերությունը չի հայտնվել գնումների Սև ցուցակում:

Դիտարկվող երկու ժամանակաշրջանում էլ Արգոհշին ՍՊԸ-ն խոշոր պայմանագրեր է կնքել տարբեր պետական կառույցների հետ, սակայն, ընդհանուր առմամբ, հետհեղափոխական ժամանակահատվածում կնքված պայմանագրային արժեքը գրեթե կրկնակի գերազանցում է նախահեղափոխական ժամանակահատվածի արժեքը (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Արգոհշին ՍՊԸ-ի պետգնումներում կնքված պայմանագրային պորտֆելի բնութագիրը

	Պատվիրատու	Կնքված պայմանագրերի քանակը	Կնքված պայմանագրերի ընդհ. արժեքը, դրամ	Գնման առարկան	Գնման ընթացակարգը
Նախահեղափոխական ժամանակահատված					
	ԵՔ	5	20,301,000	Վերելակների հիմնանորոգման, շենքերի լուսավորության կառուցման, վերանորոգման աշխատանքներ	4 ԲՄ, 1 ԳՀ
	Մասիսի համայնքապետարան	1	4,790,000	Կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ
	Գլխավոր դատախազություն	1	3,999,000	Տանիքի վերանորոգման աշխատանքներ	ԳՀ
	Աշտարակի համայնքապետարան	1	3,267,000	Աղբարկղերի մատակարարում	ԳՀ
	Մշակույթի նախարարություն	1	3,000,000	Մասնակի վերականգնման աշխատանքներ	ԳՀ
	Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն ՓԲԸ	1	2,850,000	Շքամուտքի վերակառուցման աշխատանքներ	ՀՄԱ
	Սահմանադրական դատարան	1	2,520,000	Ընթացիկ նորոգում	ԳՀ
	Այլ				
	ԸՆԴԱՄԵՆԸ	**14**	**44,149,000**		
Հետհեղափոխական ժամանակահատված					
	ԱՆ քրեակատարողական ծառայություն	1	33,000,000	Ջրահեռացման ցանցերի վերակառուցման աշխատանքներ	ԳՀ
	Քննչական կոմիտե	1	17,400,000	Շենքի հիմնանորոգում	ԳՀ
	ԱԱԾ	1	12,840,000	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	ԳՀ
	Եղեգնաձորի համայնքապետարան	1	10,497,600	Բակի նորոգման աշխատանքներ	ԳՀ
	ՊԵԿ	1	7,778,400	Տարածքի վերանորոգման աշխատանքներ	ԳՀ

	Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	2	5,196,000	Արտաքին լուսավորության սարքերի տեղադրման աշխատանքներ, ընթացիկ նորոգման և ծածկերի տեղադրման աշխատանքներ	ԳՀ
	Այլ				
	ԸՆԴԱՄԵՆԸ	**8**	**86,954,880**		

Ուշագրավ է Ոստիկանության 2018թ. ապրիլի 13-ի գրության հիման վրա Կարեն Ավանեսյան Ա/Ձ-ին գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի ուսումնասիրությունը: Այս մասնակցին Սև ցուցակում ներառելու հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ նա ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 43,453 դրամի չափով, ինչը գերազանցել է մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը (ԳՄՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Այսպիսով, Կարեն Ավանեսյան Ա/Ձ-ը 2018թ. մայիսի 19-ին ներառվել է գնումների Սև ցուցակում:

Այնուամենայնիվ, համաձայն ARMEPS կայքում ներկայացված տվյալների, այս մատակարարից, Սև ցուցակում ներառվելուց հետո, Ոստիկանությունը 2018թ. դեկտեմբերի 14-ին հրատապ մեկ անձից գնման եղանակով ձեռք է բերել 22,126,050 դրամի ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայություններ՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 13.12.2018 թվականի թիվ 1445-Ն որոշումը[2]:

Ընդհանուր առմամբ, դիտարկվող երկու ժամանակաշրջանում էլ Կարեն Ավանեսյան Ա/Ձ-ի պորտֆելի գերակշիռ մասը (94-100%) բաժին է ընկնում Ոստիկանությանը (Աղյուսակ 7):

---

[2] ՀՀ Կառավարության 13.12.2018 թվականի թիվ 1445-Ն որոշում

2. Սահմանել, որ ՀՀ ոստիկանության կողմից հանրահավաքների, զանգվածային այլ միջոցառումների ընթացքում հասարակական կարգի և անվտանգության ապահովման նպատակով ոստիկանության ուժերի տեղաշարժը պատշաճ ձևով ապահովելու համար ավտոբուսների և միկրոավտոբուսների վարձակալության ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ մեկ անձից գնման ձևով, կնքվելիք պայմանագրերի պահանջները տարածելով կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, սույն կետում նշված մեկ անձից գնման գործընթացների նկատմամբ չեն կիրառվում ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության, 71-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

Աղյուսակ 7. Կարեն Ավանեսյան Ա/Ձ-ի պետգնումներում կնքված պայմանագրային պորտֆելի բնութագիրը

	Պատվիրատու	Կնքված պայմանագրերի քանակը	Կնքված պայմանագրերի ընդհ. արժեքը, դրամ	Գնման առարկան	Գնման ընթացակարգը
Նախահեղափոխական ժամանակահատված					
	Ոստիկանություն	1	40,000,000	Ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայություններ	ԲԸՀ
	ԱԳՆ պետական արարողակարգի ծառայություն	6	1,335,800	Ներկայացուցչական և արարողակարգային ծառայություններ	ՄԱ
	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	1	571,000	Ներկայացուցչական ծառայություններ	ՄԱ
	Այլ				
	ԸՆԴԱՄԵՆԸ	**9**	**42,114,250**		
Հետհեղափոխական ժամանակահատված					
	Ոստիկանություն	3	59,046,050	Ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայություններ	2 ԳՀ, 1 ՀՄԱ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**3**	**59,046,050**		

Սև ցուցակում հայտնված մնացած 10 մասնակիցների վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ նրանցից 5-ը (Լեգալ պլյուս ՍՊԸ, Տրանսնախագիծ ՓԲԸ, Քրոմիտ ՍՊԸ, Նարնիկ ՍՊԸ և Արմես Գրուպ ՍՊԸ) չեն ներկայացրել հրավերով սահմանված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, 3-ը (Դեագա ՍՊԸ, Սեյսմշին ՍՊԸ և Հելփ-Ռ.Վ ՍՊԸ) խախտել են պայմանագրային պարտավորությունները՝ չմատակարարելով նախատեսված ապրանքները և ծառայությունները, իսկ 2-ը (Էկոպրոեկտ ՍՊԸ և Դյուրլանգ ՍՊԸ) ունեցել են գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հավելված 1

Մասնակիցներ, որոնք հայտնվել են ՍԼ ցուցակում այն պետական կառույցների բողոքների հիման վրա, որոնք նախահեղափոխական շրջանում եղել են իրենց խոշոր պատվիրատուների ցանկում

	Ընկերության անվանումը	Բողոք ներկայացրած պետական կառույցը	Նախահեղափոխ. ժամանակահատվածում պայմանագրերի գումարը, մլն դրամ	Հետհեղափոխ. ժամանակահատվածում պայմանագրերի գումարը, մլն դրամ	Նախահեղափոխական ժամանակահատվածում հիմնական պատվիրատուները	Հետհեղափոխական ժամանակահատվածում հիմնական պատվիրատուները	Ժամկետը
1.	Ռադվան Տեխնոլոգիա ՍՊԸ	ՊՆ	686.2	30	ՊՆ	ՊՆ	22.05.21
2.	Մակրո ֆուդ ՍՊԸ	ԱՆ քրեակատ. ծառ.	263	129	1. ԱՆ քրեակատ. ծառ. 2. ՊՆ 3. Սևանի հոգեբուժ. հիվ. ՓԲԸ 4. ԱԱԾ 5. Հոգեկան առողջ. պահպ. ազգ. կենտրոն ՓԲԸ 6. Ոստիկանություն 7. Կապանի բժշկական կենտրոն ՓԲԸ	1. ՊՆ 2. ԱՆ քրեակատ. ծառ. 3. Սևանի հոգեբուժ. հիվ. ՓԲԸ 4. Ոստիկանություն 5. ԱԱԾ	14.02.21
3.	Հրայր Մանուկյան Ա/Ձ	ՊՆ	194.7	102	ՊՆ	ՊՆ	23.01.21
4.	Բիզնես Թրենդ ՍՊԸ	1. ՊՆ 2. ԱՆ քրեակատ. ծառ. 3. ԵՔ	95.1	128	ԱՆ քրեակատ. ծառ.	1. ՊՆ 2. Սևանի հոգեբուժական հիվանդանոց	11.12.20
5.	Թի ԷՆ Սաունդ ՍՊԸ	ԵՔ	48.6	8.2	ԵՔ	1. Ոստիկանություն 2. Վարչապետի աշխատակազմ	22.05.21
6.	ԱՐԳՈՀՇԻՆ ՍՊԸ	Մշակույթի նախարարություն	44.1	87	1. ԵՔ 2. Մասիսի համայնքապետարան 3. Գլխավոր դատախազություն	1. ԱՆ քրեակատ. ծառ. 2. Քննչական կոմիտե 3. ԱԱԾ 4. Եղեգնաձորի համայնքապետարան 5. ՊԵԿ	11.12.20

					4. Աշտարակի համայնքապետարան 5. Մշակույթի նախարարություն 6. Ռուբիկ Հարությունյանի անվ. Աբովյանի բժշկ. կենտրոն ՓԲԸ 7. Սահմանադրական դատարան	6. Հայաէրոնավիգացիա ՓԲԸ	
7.	Կարեն Ավանեսյան Ա/Ձ	Ոստիկանություն	42	59	1. Ոստիկանություն 2. ԱԳՆ պետ. արարող. ծառ. 3. Էներգետիկ ենթ. և բն. պաշարների նախարարություն	Ոստիկանություն	19.05.20
8.	Լեգալ պլյուս ՍՊԸ	ՊՆ	30	9	1. Երևանի Մխ. Հերացու անվ. պետ. բժշկ. համալսարան հիմնադրամ 2. ՊՆ 3. ԱԱԾ 4. Նախագահի աշխատակազմ 5. Ոստիկանություն	1. ՊԵԿ 2. ԱԺ 3. ԱԻՆ 4. ՊՆ 5. Տնտ. զարգ. և ներդրումների նախարարություն 6. Ոստիկանություն 7. Արդարադատության նախարարություն 8. ՖՆ	12.07.20
9.	Տրանսնախ ագիծ ՓԲԸ	Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն	27.7	2	1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ 2. Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն 3. Չարենցավանի համայնքապետարան 4. Արագածոտնի մարզպետարան	1. Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն 2. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով 3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	26.03.21

10.	Դեագա ՍՊԸ	ՊՆ	25	69	1. ԱԱԾ 2. ՊՆ 3. Սևանի հոգեբուժ. հիվ. ՓԲԸ 4. Ոստիկանություն 5. Հոգեկան առողջ. պահպ. ազգ. կենտրոն ՓԲԸ 6. ԱՆ քրեակատ. ծառ.	1. ԵՔ 2. ՊՆ 3. ԱԱԾ	25.12.20
11.	Սեյսմշին ՍՊԸ	1. ԵՔ 2. Քաղաքաշինության կոմիտե	12.7	2	1. Մշակույթի նախարարություն 2. Վանաձորի համայնքապետարան 3. ԵՔ 4. ՀՀ ՏՉՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե	Մշակույթի նախարարություն	26.05.20
12.	Քրոմիտ ՍՊԸ	1. Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ 2. Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն ՓԲԸ	11.3		1. Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ 2. Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդ. ՓԲԸ	Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր ՓԲԸ	26.03.21
13.	Էկոպրոեկտ ՍՊԸ	Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն	8.6	5	1. Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն 2. Լոռու մարզպետարան 3. Արագածոտնի մարզպետարան 4. Տավուշի մարզպետարան	1. Տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն 2. Ստեփանակերտի համայնքապետարան 3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	01.02.21
14.	Նարնիկ ՍՊԸ	ՊՆ	8.2	6	ՊՆ	ՊՆ	26.06.20
15.	Հելփ-Ռ.Վ ՍՊԸ	ՊՆ	6.7	4	ՊՆ	ՊՆ	22.12.20
16.	Դյուրլանգ ՍՊԸ	Հայաստանի ազգ.	1.8	4	Հայաստանի ազգ. պոլիտեխնիկ. համալսարան	ՊՆ	29.09.20

		պոլիտեխնիկ. համալսարան					
17.	Արմես Գրուպ ՍՊԸ	1. ԵՔ 2. Վանաձորի համայնքապետարան	1.6	9	1. ԵՔ 2. ՊԵԿ 3. ՊՊԾ	1. ՊՆ 2. Վարչապետի աշխատակազմ 3. Լոռու մարզպետարան 4. ՊԵԿ	19.02.21